ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն համայնք, ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Արագածոտն, 2-րդ փող. 1 շենք, Հեռ. (093) 809081 , aragatsotn.aragatsotn@mta.gov.am

N 8
11 փետրվար 2020թ.

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Դ.Գևորգյան

Ձեզ ենք ներկայացնում Արագածոտն համայնքի 7-ը փետրվարի 2020թվականի ավագանու արտահերթ նիստի 7,8,9,10, որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԵԼՍԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Շ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արագածոտն, (093) 809081, aragatsotn.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 7

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Արագածոտն համայնքի ավագանին որոշեց հաստատել 2020թ.-ի փետրվարի 7-ի նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1.Արագածոտն համայնքի ավագանուն նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Արագածոտն մարզի Արագածոտն համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու և հասցե տրամադրելու վերաբերյալ:
3.Արագածոտն համայնքի 16-ը հունվարի 2020թ.-ի թիվ 7 որոշումը անվավեր ճանաչելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՔՅԱՆ ԼՈՐԻՍ

ԶԱՐՈՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ԶՈՐԻԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԵԼՍԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 8

« 07 » փետրվար 2020 թվական

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշմամբ սահմանված պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2020 թվականի հունվարի 29-ի N1 դրական եզրակացությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքի վարչական տարածքում գտնվող «ՀԵԼԻՈՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 8.44945 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-017-0139-0021), 10.35785 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-017-0139-0019), 10.56871 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-017-0139-0018) և 9.33538 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-017-0139-0020) գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության արոտավայր հողատեսքերը փոփոխել և դարձնել էներգետիկայի տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության էներգետիկայի հողեր գործառնական նշանակության՝ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու նպատակով:

2. ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջարկել «ԲԱՐԻ ԱՐԵՎ» ՍՊԸ-ին և «ՎԵՆՏՈՒՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին եռամսյա ժամկետում համայնքային բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի կադաստրային արժեքների նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը:

3. Սույն որոշման 2-րդ կետով սահմանված ժամկետում և սահմանված արժեքներով համայնքային բյուջե չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

4. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործողություններ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ավագանիներ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1. Մելիքյան Լորիս
2. Զարոյան Գայանե
3. Կիրակոսյան Լուսինե
4. Մելիքյան Զորիկ
5. Մկրտչյան Արմենուհի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՂԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արագածոտն, (093) 809081, aragatsotn.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 9

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.01.2020Թ.-Ի ԹԻՎ 7 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի 01/1/000360-2020 գրությունը համայնքի ավագանի***ն որոշում է՝***

Արագածոտն համայնքի 07.02.2020թ.-ի ավագանու նիստի թիվ 9 որոշումով անվավեր ճանաչել 16.01.2020թ.-ի թիվ 7 որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՔՅԱՆ ԼՈՐԻՍ

ՋԱՐՈՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՋՈՐԻԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԵԼՍԻԿ ՂԱՋԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արագածոտն, (093) 809081, aragatsotn.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 10

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծել համաձայն համայնքի ավագանու սահմանած չափորոշիչների:

1.Սոցիալապես և տնտեսապես անապահով ընտանիքներին 20000-40000 ՀՀ դրամ:

2.Միայնակ թոշակառուներին 20000-30000ՀՀ դրամ:

3.Միակողմանի ծնողազուրկ ընտանիքներին - 20000-30000 ՀՀ դրամ:

4.Երկկողմանի ծնողազուրկ ընտանիքներին - 30000-40000 ՀՀ դրամ:

5.Բազմազավակ 4 և ավել երեխաներ ունեցող ընտանիքներին 30000-40000 ՀՀ դրամ:

6.Ղարաբաղյան պատերազմի մասնակիցների ընտանիքներին 40000-50000 ՀՀ դրամ:

7.Ժամկետային զինծառայության մեջ գտնվող զինծառայողների ընտանիքներին 20000-30000 ՀՀ դրամ:

8.Տարերային աղետից տուժած կարիքավոր ընտանիքներին /մրրկանման քամիներ, գետի վարարումներ/ կախված վնասի չափից - մինչև 50000 ՀՀ դրամ:

9.Հաշմանդամության կարգ ունեցող բնակիչներին՝
ա/ 1-ին կարգ ունեցող հաշմանդամներին 40000-60000 ՀՀ դրամ:
բ/ 2-րդ կարգ ունեցող հաշմանդամներին - 40000-50000 ՀՀ դրամ:
գ/ 3-րդ կարգ ունեցողներին 30000-40000 ՀՀ դրամ:

10.Առողջական խնդիր ունեցող բնակիչների ընտանիքներին /կախված հիվանդության աստիճանից/ 50000-80000 ՀՀ դրամ:

11.Հուղարկավորության նպաստ կարիքավոր ընտանիքներին 80000-100000 ՀՀ դրամ:

Ողջ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՔՅԱՆ ԼՈՐԻՍ

ՋԱՐՈՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՋՈՐԻԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԵԼՍԻԿ ՂԱՋԱՐՅԱՆ